ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 30 >> ապրիլի 2013թվականի N 52 -Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐԻ ՈՒԱՁ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել <<Հայաստանի Կույրերի Միավորում>> հաշմանդամների հասարակական կազմակերպության <<Գյումրի ՈՒԱՁ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2013 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարը զիջելու խնդրանքով:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու մասին>> N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Զիջել <<Հայաստանի Կույրերի Միավորում>> հաշմանդամների հասարակական կազմակերպության <<Գյումրի ՈՒԱՁ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2013 թվականի գույքահարկի՝ 176000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) դրամ և հողի հարկի՝ 18746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) դրամ գումարները:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ